

- Գոհար Թուրունջյան՝** «Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության համանախագահ, «ՎիՋիՍԻ Արպլան» (VGC-Arplan) ճարտարապետական ընկերության ավագ ճարտարապետ
- Թեմա՝** Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության գործողություններն՝ աջակցելու ՀՀ տնտեսության զարգացմանը
- Նախագիծ՝** Ճարտարապետության բնագավառի հաջողված միջազգային փորձը Հայաստան ներմուծելու հնարավորությունները և դրանց հետագա զարգացման տեսլականը

Հարգարժան գործընկերներ,

Հարգելի Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի մասնակիցներ,

Ուրախ եմք **«Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն»** խորագրով Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովին մասնակցելու համար և հայտնում եմք, որ Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության ընթացիկ աշխատանքային պլանի բովանդակությունը հիմնականում համապատասխանում է համաժողովի քննարկման թեմաների կոնտեքստին, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում Սփյուռքի ներդրումների արդյունավետության բարձրացման և Հայաստան-Սփյուռք գործակցության ակտիվացման մասով:

Այժմ ավելի մանրամասն կներկայացնեմ մեր կատարած և նախատեսվող աշխատանքները:

1980թ.-ին ամուսինս՝ Վահե Թուրունջյանը և ես Քաթարի Դոհա քաղաքում միասին հիմնեցինք «ՎիՋիՍԻ Արպլան» ճարտարապետական ընկերությունը, որի համասեփականատերերն ենք մինչ օրս: Պահպանելով տեղի ճարտարապետական սովորույթները, ընկերությունը տարիների ընթացքում հաջողությամբ ձևավորել է նախագծերի հզոր պորտֆոլիո՝ ներառելով կոմերցիոն նախագծեր այնպիսի հաստատությունների համար, ինչպիսիք են “Qatar Petroleum” և “Jeep Chrysler” ընկերությունները, ինչպես նաև մասնավոր պալատներ, վիլլաներ և բարձրահարկ շենքեր մի շարք բարձրաստիճան անձանց համար:

Տարիներ շարունակ ապրելով և աշխատելով Հայաստանի սահմաններից դուրս՝ մշտապես հետաքրքրված եմք եղել հայրենիքի հետ համագործակցության հնարավորությամբ և փորձեր ենք կատարել այն իրականություն դարձնել, ինչը հնարավոր եղավ մեր հիմնած «ՎիՋիՍԻ Արպլան» (VGC-Arplan) ճարտարապետական ընկերության միջոցով:

2007թ.-ին Երևանում հիմնադրել ենք «ՎիՋիՍԻ Արպլան»-ի քույր գրասենյակը՝ «Արպլան» ՍՊԸ-ն՝ Դոհայից Երևան ներմուծելով (outsourcing) նախագծեր, որոնց

դիզայնը պետք է իրականացվեր Երևանում, իսկ աշխատանքները՝ Դոհայում: Երևանյան գրասենյակի աշխատակիցները վերապատրաստվել են նախագծային արդի պրակտիկայում կիրառվող միջազգային կոդերով և կանոնակարգերով աշխատելու համար: Աշխատակիցները սկզբում վերապատրաստվել են Դոհայում, այնուհետև վերադարձել Երևան և շարունակել աշխատանքները Երևանից՝ իրենց փորձով և առաջադեմ նախագծման հմտությունների միջոցով նպաստելով Դոհայի գրասենյակի գործունեությանը:

Այնուհետև Հայաստանում ևս նախագծեր իրականացնելու հնարավորություն ունեցանք, որոնց շրջանակներում համագործակցում ենք մեր ոլորտի տեղական պրոֆեսիոնալ ընկերությունների հետ:

«Արպլան» ՍՊԸ-ն (Arplan LLC) ունի 10-ամյա աշխատանքային փորձ, որի ընթացքում իրականացվել են բազմաթիվ նախագծեր արտերկրի համար և այժմ ընկերությունը հասանելի է նաև տեղական պատվիրատուին: Այսօր, Համաժողովի ընթացքում, մենք խոսում ենք “outsourcing”-ի մասին, որը մեր ընկերությունն իրականացնում է վերջին տասը տարիների ընթացքում՝ համագործակցելով Հայաստանում հիմնադրված շատ այլ ընկերությունների հետ և ապահովելով աշխատատեղեր երիտասարդ մասնագիտական ներուժը Հայաստանում պահելու համար:

Մեր փորձի վրա հիմնվելով, մենք կարող ենք խրախուսել սփյուռքահայ ներդրողին ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ունենալ մեր օրինակով և բիզնես սկսել Հայաստանում:

Բայց ամենից կարևոր պատճառը խրախուսելու մեր մասնագետներին և նրանց ընկերություններին Հայաստանում մասնաճյուղեր բացել, նյութական և մտավոր կորստից խուսափելն է, որը պատահեց մեր մասնագիտական համայնքի հետ Սիրիայում վերջին յոթ տարիների ընթացքում և իհարկե խուսափել, որպեսզի չկրկնվի նույնը Լիբանանում, Հորդանանում, Իրաքում, Եգիպտոսում և Մերձավոր Արևելքի այլ երկրներում և առհասարակ այլուր:

Սրա արդյունքում էր, որ «Արպլան» ՍՊԸ-ի հետ ունեցած մեր տասը տարիների փորձը ցանկացանք կիսել այս անգամ արդեն համահայկական հարթակում:

Մեր փորձի հիման վրա, այսօր մենք կարող ենք վստահաբար խրախուսել մեր ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ համայնքներին ՆԵՐԳԱՂԹԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ: 2012-ին ստանձնել ենք ՀՀ նախագահի ղեկավարությամբ և հանձնարարությամբ և ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ և աջակցությամբ հիմնադրված Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության համանախագահությունը և մշակել 8 կետից բաղկացած ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԳԱՂԹԻ ԾՐԱԳԻՐ ղեկի Հայաստան Ընկերակցության բազմապրոֆիլ մասնագիտություն ունեցող անդամների համար, որը վերջիններիս տրամադրում է մասնագիտական աջակցություն և նրանց համար պայմաններ ստեղծում Հայաստանին կապվել ՄԱՄՆԱԳԻՏՈՐԵՆ:

Այսօր մենք հնարավորություն ունենք նախաձեռնել միավորումներ առնվազն այն 50 երկրներում, որտեղ կան հավատարմագրված հայկական դեսպանություններ, ստանալ նրանց խորհուրդն ու աջակցությունը անդամների առաջադրման և աշխատանքային նոր միավորումներ նախաձեռնելու հարցերով, ինչպես նաև Ընկերակցության կողմից մշակված 8 կետից բաղկացած ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ իրականացման համար:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Մերժ Սարգսյանը համաժողովի պաշտոնական բացման իր ելույթի ժամանակ հայտարարեց մինչև 2040 թվականը Հայաստանի բնակչության թիվը 4 միլիոնի հասցնելու ծրագրի մասին: Մենք որպես ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցություն պատրաստակամ ենք մեր ներդրումն ունենալ այս գործում:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի բացման խոսքից ևս մենք կատարեցինք ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ եզրահանգումներ, որոնք են՝

- Սփյուռքը մասնագիտական շտեմարան է
- Մենք պետք է ներգաղթի կոչ անենք մեր մասնագիտական աշխատուժին
- Մենք պետք է իրականացնենք երկարաժամկետ ծրագրեր
- Մենք պետք է այնպես անենք, որպեսզի նրանք զգան, որ պատկանում են Հայաստանին:

Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ Ընկերակցության կողմից մշակված 8 կետից բաղկացած ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ համահունչ է ՀՀ նախագահի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի կողմից արված կոչերին և առաջարկվող ծրագրերին, որն առաջարկում է աշխատանքային հետևյալ ուղղությունները՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Ընկերակցության տվյալների բազայում (DATABASE) ընդգրկված շինարարական արդյունաբերության մաս կազմող Հայաստանում, Սփյուռքում և Արցախում գործող ընկերությունների մասնակցությամբ:

Ընկերակցությունն (ՃՃՀԱ) ունի աջակցող ծրագրեր այն ԱՆԴԱՄՆԵՐԻ համար, ովքեր ցանկանում են բիզնես հիմնել կամ բացել արտերկրում գործող ընկերությունների մասնաճյուղերը Հայաստանում կամ Սփյուռքում:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Ընկերակցության գործընկեր մասնավոր զբոսաշրջային գործակալությունների մասնակցությամբ, որոնք ունեն իրենց ոլորտում հաստատված փորձ և հուսալիություն:

Ընկերակցությունը պատրաստել է հատուկ փաթեթներ զբոսաշրջային և անշարժ գույքի ոլորտների վերաբերյալ այն ԱՆԴԱՄՆԵՐԻ համար, ովքեր ցանկանում են այցելել կամ հիմնավորվել Հայաստանում կամ Արցախում:

3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ընկերակցությունը ստորագրել է Համաձայնության հուշագրեր Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՀՀԱՀ) և Շուշիի Տեխնոլոգիական համալսարանի հետ, որոնք աջակցում են շրջանավարտներին և խթանում 1) և 2) կետերը: Հուշագրերի շրջանակում Ընկերակցությունը աջակցում է այն ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ովքեր ցանկանում են իրենց փորձը կիսել հետազոտական, կրթական կամ վերապատրաստման ծրագրերում:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ընկերակցությունը ՀՀ սփյուռքի նախարարին կից ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ անդամ է, որը ներկայացնում է Սփյուռքի բոլոր հայկական կազմակերպություններն ու կառույցները: Մենք համագործակցում ենք գործող հայկական կազմակերպությունների և կամ դրանցում ընդգրկված մեր անդամների հետ, ովքեր ցանկություն ունեն աշխատել սփյուռքի հայկական կազմակերպությունների միջոցով: Ընկերակցությունն ԱՆԴԱՄՆԵՐԻՆ տրամադրում է ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ խորհրդատվություն Հայաստանում և Արցախում իրենց ծրագրերի իրականացման համար:

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԿ) ՀԵՏ

ՀՀ սփյուռքի նախարարության միջոցով Ընկերակցությունը համագործակցում է Հայաստանում գործող մասնագիտական այլ ՀԿ-ների հետ, մասնավորապես՝ Լրագրողների, Բժիշկների, Իրավաբանների, Ոսկերիչների համահայկական ընկերակցությունների հետ: Ընկերակցությունը կարող է ԱՆԴԱՄՆԵՐԻՆ աջակցել ոլորտի խնդիրների բարձրաձայնման և փոխադարձ նախագծերի իրականացման գործում:

6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Այն ԱՆԴԱՄՆԵՐԸ, ովքեր ցանկանում են աշխատել դեսպանության օղակներով - ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ Ընկերակցությանը հասանելի են ավելի քան 50 հայկական դեսպանություններ, որոնց միջոցով կապեր ենք հաստատում մասնագիտական համայնքների հետ՝ համապատասխան երկրներում նոր ներկայացուցչություններ կազմակերպելու և համագործակցելու համար: Ընկերակցության միավորումները, որոնք պատրաստ են աշխատել դեսպանությունների հետ, կարող են իրականացնել տարբեր միջոցառումներ, նախագծեր, ցուցահանդեսներ, տոնավաճառներ՝ խրախուսելու «Պատրաստված է Հայաստանում»-ն ամբողջ աշխարհում:

7. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄՅԻ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼՐՈՒՄ

Ընկերակցությունը զբաղվում է շինարարական արդյունաբերության բնագավառներում գործող կազմակերպությունների, ընկերությունների և անհատների մասին տեղեկությունների հավաքագրմամբ և ստեղծել է տվյալների բացառիկ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԶՄ: Այն հնարավորություն է տալիս Ընկերակցության ԱՆԴԱՄՆԵՐԻՆ /անհատ և կազմակերպություն/ կապ հաստատել նմանատիպ գործունեություն ծավալող անհատների և կազմակերպությունների միջև և իրականացնել նախագծեր Հայաստան-Արցախ, Սփյուռք եռանկյունու շրջանակներում:

8. ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՅՔՈՒՄ (PUBLISHING ON THE WEBSITE)

Ընկերակցության կայքն ամենից առաջ վերոհիշյալ կետերը միմյանց կապող գործիք է և հնարավորություն է տալիս անդամներին ակտիվորեն մասնակցել ոլորտի նորությունների, նյութերի, հոդվածների, հրապարակմանն ու շարունակական համալրմանը: Այն խրախուսում է Ընկերակցության անդամներին բացահայտել և գործընկերներին ներկայացնել իրենց հմտությունները, տաղանդն ու գիտելիքները, ինչպես նաև բոլոր համապատասխան գործնական հնարավորություններն ու վերապատրաստման ծրագրերը՝ օգտվելով մեր հարթակից, որը կամրջում է Հայաստանը, Արցախն ու Սփյուռքը:

Տեղեկացնում եմ, որ մեր համայնքը բաղկացած է ճարտարապետներից, ճարտարագետներից, դիզայներներից, որակական հետազոտողներից, շինարարական իրավաբաններից, շինարարական արդյունաբերության կազմակերպություններից, շինարարական նյութերի մատակարարներից: Այս ցանկը բավականին հարուստ է, իսկ ներուժը՝ ավելին:

Առաջարկվող ԾՐԱԳԻՐԸ այն ուղեցույցն է, որը կարող է կիրառվել նաև այլ հասարակական կազմակերպությունների կողմից:

Այս ամենից եզրակացնում ենք, որ Ընկերակցության ներկայացրած ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ և այսօրվա ՓՈԽԱԴԱՐՁ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ խորագիրը կրող համաժողովը համահունչ են մեր ընկերակցության տեսլականին:

Այն է՝ միավորել ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ մեկ հարթակում, ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ համախմբված աշխատանքի միջոցով նպաստել դեպի Հայաստան և Արցախ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԳԱՂԹԻՆ և մեր երկու հայրենիքների տնտեսական զարգացմանն ու այնտեղ հաստատվելուն:

Մենք հայրենադարձների նոր տեսակ ենք, ովքեր այժմ ապրում և աշխատում են Սփյուռքում, Հայաստանում և Արցախում միաժամանակ: Մենք հավատարիմ ենք մեր երկրին և մեր ներկայությունն ունենք հայրենիքում: Մենք հավատում ենք այն

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ, որը կարող է լինել միմիայն համակարգված և համախմբված աշխատանքի շնորհիվ:

Սպասում ենք ձեզ մեր գրասենյակում Տիգրան Մեծի 4 հասցեում:

Մեր պաշտոնական նոր կայքը կթողարկվի շուտով և հասանելի կլինի www.paaae.org հասցեով:

Մեզ կարող եք գտնել նաև ֆեյսբուքում և ծանոթանալ մեր նորություններին՝ <https://www.facebook.com/Pan-Armenian-Association-of-Architects-and-Engineers-218319774898434/>

Հարգանքով,

Վահե Թութունջյան

Գոհար Թութունջյան

Համանախագահներ

Ճարտարապետների և ճարտարագետների

համահայկական ընկերակցություն